

պիցես՝ զարարիչն օրհնեսցես», զոր նոյն տեղերն յառաջ կը բերէ Տաթեւացին:

Նոյն վարդապետը կը պատմէ դարձեալ քաղաքավարական յարգանքի մը փոխանակութիւնը կոչնականաց մէջ, ըսելով. «Յըմպելն գինոյն՝ Անոյշ, ասեմք միմեանց», այս ինքն խմողին (Յովհ. Բ, 10): Իսկ նախկին տեղեաց մէջ կը յարէ՝ թէ «յետ ըմպելոյն շնորհակալիմք միմեանց», այս ինքն խմողը մաղթողաց: Եթէ շնորհակալիքն «յետ ըմպելոյն» է, ուրեմն մաղթանքն «յըմպելն» կը նշանակէ խմելէ յառաջ: Եւ թէ զայս, թէ օրհնելը կ'իմանայ նա գինւոյ որ եւ է բաժակի համար. այնպէս որ «յայլ կերակուրս եւ ըմպելիս», կ'ըսէ, որով թուի թէ կ'իմանայ ջուր եւ այլն, «ոչ առնեմք նոյնպէս»:

Արեւելեայց արդի բարեկրթութեան մասն համարուած մէկ ձեւին ալ կը պատահինք միջին դարուն: Կը պատմէ Կիրակոս՝ թէ Մխ. Գոշ տեսլեան մէջ կ'ընդունի բաժակ մը եւ խմելու հրաման. եւ նա «երևա յետս դարձոցեալ՝ զգուշութեամբ ըմբեաց» (241): Այս սովորութիւնը սակայն փոխառութիւն համարելու ենք Արաբներէն. վասն զի ասոր հակառակը կը կարգանք Փաւստոսի քով, որ կը պատմէ՝ թէ Պապայ «բերանն ի բաժակին էր յըմպելն»,